Այդպես է վարվել Ստեփանոս ծաղկողը՝ Տօնականի լուսանցազարդերը և ենկյունազարդերը գծելիս։ Ստեփանոսը գրչափորձեր է կատարել ավետարանի խորանների թերթերի ազատ էջերում, ի դեպ, Ավետարանը ավարտվել է 1201 թվականին, Տօնականը՝ 1202, բայց քանի որ վերջինս սկսված էր 1200 թ., մոտ երկու տարի հետո նրա երկու երրորդը պետք է ավարտված և ծաղկած լիներ։ Գրչափորձի թուչունը մոտավորապես այդտեղ էլ ընկնում է՝ 83 պրականոց ձեռագրի 60-րդ պրակում։ Շտապողականությունը ու թերավարտությունը, որ նկատվում է Ավետարանը ծաղկելիս, հետևանք էր Տօնականի ծաղկման հսկայական աշխատանքի, որ ամբողջովին զբաղեցրել է ծաղկողին։ Եթե դրան ավելացնենք նաև Տօնականի սրբագրությունը, որ կատարում էր ծաղկողը, պարզ կդառնա նրա ծանրաբեռնվածության աստիճանը։

Ձեռագրի վերջում կա 1250 թ. կազմելու վերաբերյալ հիշատակարան։ Երևում է որ կազմվել է վերստին, որովհետև կտրտված են բոլոր ծաղկած էջերի լուսանցային մասերից։ Այստեղ հիշվում է նաև «զԸնձեր նաղաշն և ծնողսն իւր զԳայլերն, որ աշխատեցաւ և ծաղկեցաւ իւր հալալ ընչիւք զսուրբ Աւետարանս»։ Եթե ձեռագիրը կազմված չէր, բայց գրված էր համաբարբառը, ինչու Ընձերը չավարտեց գոնե կանոնների լրիվ ծաղկումը, չէ որ մի քանի գիծ էր պետք գծել միայն։ Այնուհետև որտե՞ղ են ավետարանի լուսանցազարդերը։ Հովհաննեսը ավետարանիչներին նկարել է ձեռագիրը կազմելուց առաջ, մինչ նրա մասին ակնարկություն չկա, այն ժամանակ, երբ կազմողը հիշում է կազմի համար մի քիչ մետաքսաթել տվողին՝ Ստեփանոսին։ Բանն այն է, որ վերջինս իր ժամանակակիցն է, իսկ ծաղկող Հովհաննեսը՝ ոչ։ Հովհաննեսը խորանները ծաղկելուց հետո է նկարել ավետարանիչներին։ Նշանակում է կազմողին ժամանակակից չէ նաև խորանների ծաղկողը (որը Ստեփանոս ծաղկողն է) և որ ավետարանիչների փոխարեն նկարել էր խաչը, ինչպես անում էին հնում։

Ա Կանոնի գլխազարդում արդյոք Ստեփանոսի անունը չի եղել, որ կտրվել է։ Ձեռագրի բոլոր նկարների եզրերի, ինչպես նաև մյուս էջերի, խորը կտրվածությունը ցույց է տալիս, որ ձեռագիրը կազմվել է երկրորդ անգամ, առաջին կազմողը չէ Հովհաննեսը, ոչ էլ Ահարոն քահանան՝ առաջին ստացողը։ Առաջին ծաղկողը Ստեփաննոսն է, երկրորդը՝ Հովհաննեսը, Ընձեր նաղաշից նկար չկա։ Մանրանկարների Ստեփանոսի հեղինակության ապացույցն է Տօնականի և սույն ձեռագրի նկարների նմանությունը, որոնցից բերված է մի քանի նմուշ։

* * *

Ամփոփենք։ Հայերեն ձեռագրական արվեստի գլուխ-գործոցներից մեկը, Մաշտոցյան Մատենադարանի № 7729 Տօնական-ճառընտիրը պատրոն Աստուածատուր Բաբերդացու պատվերով Վարդան Կարնեցի գրիչը գրել, իսկ Ստեփաննոս քահանան ծաղկել է 1200—1202 թթ., Դարանաղյաց գավառի Ավագ վանքում։ Այն կոչվում է և պիտի շարունակվի կոչվել Մշո Տօնական կամ Մշո Ճառընտիր։ Մշո Առաքելոց վանքի միաբանները, Եսայի եպիսկոպոսի գլխավորությամբ, այն փրկեցին գերությունից, պահպանեցին գուրգուրանքով և ավանդեցին դարերին։ Եթե հայերեն ամենախոշոր ձեռագիրը իր ծնունդով պարտական է Ավագ վանքին, նրա գրիչներին, ծաղկողներին և Բաբերդի ռա-